

4759

ԵԱՎՀԱՌՈՂՋ
ՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ԲԺ. Ի. Ա. ՈՂՋԱՆՑԻՔ



ՈՆՈՐԵԱ

ՍՈՒՍԱՆԱԿ

ՅԵԿ
ՊԱՅՔԱՐԸ^Ը
ՆՐԱ ԴԵՍ

616.9

0 - 29

ԵԶԱԳ-ԱԽՎԱՊՎԵՆ ՅԵՐԿՐԵԵՒՆ ՀՐԵՏԵՐԵԿՁԱԼԻԹՑՈՒՆ - 1935

13 NOV 2013

66.3
Q-29
ԱՐԾԱԿ ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

30 JUL 2010

Ազով-Սևալիյան Մաշկա-Վեհրաբանական
Գիտա-Հետազոտական Ինստիտուտ

ԲԺՇՀԿ Ի. Ա. ԱԼՇԱՆՍԿԻՑ

ԸՆԿ. ԸՆԹԵՐՑՈՂ.

Հայտնեցեմ ձեր կարծիքը այս գրքի մասին
հետեւյալ հասցեով.

Г. Ростов-Дон, Буденновский 30,
Азово-Черноморское Краевое Книго-
издательство, армянская секция.

Նամակները կարելի յե ուղարկել առանց
նամակադրության:

Գ Ո Ն Ո Ր Ե Ա

(ՍՈՒՍԱՆԱԿ)

ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱ
3964
37790

ՀՀ ՏՀ

ԿՀՏ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տպագրություն - Երևան - 1935

ՀԱՅԱ-ՍՍՀ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	3
Ինչ և սուսանակը և ինչից և նա առաջանում	11
Հիմքանդության ընթացքը	15
ա) Սուսանակի ընթացքը աղամարդկանց մոտ	16
բ) Սուսանակի ընթացքը կանանց մոտ .	21
գ) Սուսանակի ընթացքը յերեխաների մոտ	23
Ինչպես պահպանվել սուսանակից	24
Սուսանակի բուժումը	26
Բուժելի յե արդյոք սուսանակը	29
Հուշագիր՝ սուսանակով հիմքանդի համար	31

ԱՌԱՋԱԲԱՆ

Կապիտալիստական իրավակարգում անխուսափելիորեն ստեղծվում են այնպիսի պայմաններ, վորոնք նպաստում են հիվանդության ու մահացության աճմանն ընդհանրապես և վեներական ախտերի աճմանը մասնավորապես։ Այս բացատրվում են նրանով, վոր կապիտալիզմը հիմնված ե մասնավոր սեփականության և աշխատավորների շահագործման վրա։

Նույնիսկ այն ժամանակը յերբ արտասահմանում բանվորն աշխատանք ունի, նա կարող է այնքան վաստակել, վորպեսզի կարողանա մեծ դժվարությամբ իր գլուխը պահել։ Ամուսնությունը — դա մի շռայլությունն է, վորն այնքան ել հեշտությամբ չի կարող թույլ տալ իրեն բանվորը։

Դրա համար ե, վոր կապիտալիստական յերկրներում, սեռական ցանկությանը բարփարարություն տալու համար, մարդիկ փողով գնում են կոչ մարմինը, այսինքն ոգտվում են պոռնկությունից, վորի հետևանքը, վորպես կանոն, վեներական ախտով վարակումն է։ Աշխատանքի անտանելի պայմաններն են, վոր բանվորին մղում են ոգտվել պոռնկությունից և անձնատուր լինել հարբեցողության։

Գործազրկությունը, վոր կապիտալիստական յերկրներում մնայուն բնույթ ե կրում, առանձնապես տարածված ե կանանց միջնու տնտեսական ծանր պայմաններ և ստեղծում նրանց համար։ Այդ պայմանները մղում են նրանց գնալու պոռնկության ուղիղով։ Հետեաբար պոռնկությունն՝ այդ յերկրներում գոյություն ունեցող իրավակարգի ընական և անհրաժեշտ հետևանքն ե։

Պոռնկությունը հանդիսանում է վեներական ախտերի գլխավոր հիմքն ու տարածողը։

Կապիտալիստական յերկրների գյուղերում զյուղացիությունն անընդհատ աղքատանում ե, Գյուղացիության մի մասը բըռնում է բարբակության ուղին, իսկ մյուս

հոծ մասը՝ գնում և քաղաք կողմանակի վաստակ ճարելու համար։ Այստեղ նրանք վարակում են պոռնիկ կանանցից և վերադառնալիս՝ վեներական ախտերը տանում են Երենց տունը, իրենց գյուղը։

Այսպիսով, կապիտալիստական պետության մեջ գոյություն ունեն այն բոլոր պայմանները, վորոնք անհրաժեշտ են վեներական ախտերի անընդհատ աճման համար։ Վոր այդ իրոք այդպես ե, ցույց են տալիս որինակ, հետեյալ թվերը։ Ֆրանսիայում, 1931 թվին, ամբողջ բնակչության $\frac{1}{10}$ մասը սիֆիլիսով եր բոնված։ Փոքրիկ Բելգիայում, վորը մեր յերկրամասից փոքր տարածություն ունի, կան 400 հազար սիֆիլիտիկ։

Վեներական ախտերն առանձնապես ուժեղ կերպով տարածված են գաղութային յերկրներում, ուր կապիտալիզմի հարստահարությունն անհախընթաց չափերի յե հասել ներկայումս։

Ավելի լավ չեր գրությունը ցարական Ռուսաստանում. յեթե 1902 թ. Ռուսաստանի քաղաքներում 10 հազար բնակչության միջից 294 հոգին հիվանդ եյին վեներական ախտերով, ապա 1911 թվին բնակչության նույն քանակից արդեն հիվանդ

ելին 371 հոդի 1914 թվի համաշխարհային պատերազմի հետևանքով վեներական հիվանդությունների թիվն ել ավելի շատացավ և խորհրդային յերկիրը մեծ թվով հիվանդություններ ստացավ ցարական Ռուսաստանից իբր ժառանգություն:

Միանգամայն այլ ե զրությունը ԽՍՀՄ-ում՝ Խորհրդային Միությունը կառուցում ե սոցիալիստական պետություն և վերացնում ե կապիտալիզմի մնացորդները։ Վերացված են սոցիալական այն բոլոր արմատները, վորոնք սնունդ ելին մատակարարում պոռոնկությանը և վեներական ախտերին։ Թեև վեներական հիվանդությունները դեռ չեն վերացված, բայց տարեցտարի նրանց թիվը քանի գնում պակասում ե։ Գիտության վաստակավոր գործիչ պրոֆեսոր Բրոնիները հետեւյալ թվական տվյալներն ե տալիս։ 1928 թվին Մոսկվայի մարզում յերեան ե բերված սիֆիլիսի 6743 դեպք, իսկ 1931 թ.՝ 3,507 դեպք, այսինքն յերկու անգամ պակաս, չնայած վոր այդ ժամանակաշրջանում բնակչության թիվն զգալի չափով ավելացել եր։ Պարզապես տեսնում ենք, վոր վեներական հիվանդություններն ամենուրեք պակասել են. նույնը պետք ե ասել նաև ազ-

գային մարզերի մասին, ուր առանձնապե ծաղկած եյին վեներական ախտերը ցարական իշխանության որով։

ՌԽՍՖՀ-ում 1913 թվին ընակչության 10,000 հոգուց սուսանակով հիվանդ եյին 45,1-ը, իսկ 1932 թվին այդ թիվն իջակ մինչև 16,7-ի. 1913 թվին 10,000 հոգուց սիֆիլիսով հիվանդ եյին 79,2-ը, իսկ 1932 թվին՝ 13,1-ը։ Նույնպիսի վայրիջում նշվում ե, որինակ, Դոնի Ռուսովում. 1910 — 14 թվականներին 10,000 հոգուց սիֆիլիսով հիվանդ եյին 324,5-ը, 1930 — 32 թ.թ. — 40,2 ը. սուսանակով՝ 260,4 հոգի 1910 — 14 թ.թ. և 79,1-ը — 1930 — 32 թ.թ.

Խորհրդային Միության ձեռք բերած հաջողությունները բացարկվում են նրանով, վոր այստեղ աշխատանքը «պատվի գործ ե, փառքի գործ ե, արիության և ներսության գործ ե»։ Նրանով, վոր այստեղ գործազրկությունը վերացել ե, և աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակն աճում ե անփոփոխ կերպով։ Նրանով, վոր պոռնկությունը հիմնականում վերացել ե, վորովհետև կինն ազատազրկած ե և աշխատավորների ընտանիքի իրավահավասար անդամն ե դարձել։ Նրանով, վոր Խորհրդային

Միության մեջ, ուր անդասակարգ հասարակություն ե կառուցվում, կան այն բոլոր անհրաժեշտ պայմանները, վորոնց շնորհիվ արգեն հնարավոր ե վեներական ախտերի, վորպես մասսայական յերկույթի, վերացման հարցագրումը:

Վեներական ախտերի նվազման գործում փոքր դեր չեն խաղում նաև այն միջնորդառությունները, վորոնք իրականացվել և իրականացվում են խորհրդային առողջապահության օրգանների ձեռքբերով՝ այս հիվանդությունների դեմ մղված պայքարում:

Չափազանցություն չի լինի, յեթե ասենք, վոր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում վեներական ախտերի դեմ պայքար չի տարվել:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հակայական աշխատանք ե ծավալված վեներական ախտերի դեմ մղվող պայքարի ճակատամասում:

Վեներաբ անականդիսպանսյորների թիվը առաջին հնդամյակում 183-ից հասավ 287-ի, այսինքն բարձրացավ 60 %-ով. դյուղական վեներաբանական պունկտերի ու ջոկատների թիվը — 287-ից մինչև 597-ը, այսինքն 108%: Վեներական դիսպանսյորներում վոչ միայն

հիվանդներն են բուժվում, այլև հետազոտվում են նրանց ընտանիքները, հայտաբերվում են վարակման աղբյուրները, վորպեսզի վոմանք վարակվելուց ապահովված լինեն, մյուսներն ել բժշկվելու ներդրավվեն: Հակավեներական հիմնարկները տանում են նաև սանիտարա - լուսավորական աշխատանք. Նրանք իրենց աշխատանքում հիմնվում են աշխատավորների ակտիվության վրա: Այս գործում ոգնության ե գալիս նաև մեր որենսուրությունը, վորը պատժում և նրանց, ովքեր գիտենալով իրենց հիվանդ լինելը, վեներական ախտով են վարակում նաև ուրիշներին:

Վեներական հիվանդությունները պարզապես պակասում են, բայց տակավին չեն անհայտացել, հետևաբար նրանց դեմ պայքարը պետք ե դեռ ուժգնորեն շարունակել:

Այս զրգույկում մենք կամենում ենք կանգ առնել վեներական ախտերից մենք՝ գոնորեայի կամ սուսանակի վրա, վորն ամենատարածված հիվանդությունն ե: Կամենում ենք պատմել՝ ինչպես ե տարածվում այս հիվանդությունը, ինչ վաս և հասցնում նա թե իրեն՝ հիվանդին և թե աշխատավորների կողեկտիվին: Չե վոր շատերը

նրան համար են հիվանդանում, վոր չգիտեն
նբանից պահպանվելու յեղանակը:

Իսկ նրանից պահպանվելու յեղանակն
իմանալու համար, հարկավոր ե ծանոթ լի-
նել, թե ի՞նչ հիվանդություն ե դա, ի՞նչպես
ե առաջանում և ի՞նչ պետք ե անել՝ նրա-
նով չվարակվելու համար:


Վեներական ախտերը կվերասնան միայն
այն ժամանակ, յերբ այդ դործին լայն չափե-
րով կմասնակցեն իրենք աշխատավորները:

Ի՞ՆՉ Ե ՍՈՒՍԱՆԱԿԸ ՅԵՎ ԻՆՉԻՑ Ե ՆԱ ԱՌԱՋԱՆՈՒՄ

Սուսանակը կամ գոնորեան վարակիչ
հիվանդություն ե. նրան առաջցնում ե մի
հատուկ միկրոբ, վորը գտնված ե 1879 թվին
գերմանացի գիտնական Նեյսերի ձեռքով
և կոչվում ե զոնոկոկ: Յեթե սուսանակով
հիվանդ տղամարդու կամ կնոջ մի կաթիլ
թարախը վերցնենք, քսենք մի կտոր ապակու
յերեսին, համապատասխան յեղանակովներ-
կենք այն և ապա մանրադիտակով (միկրոս-
կոպ) դիտենք, կտեսնենք, վոր այդպիսի
հիվանդի թարախը, մանավանդ հիվանդու-
թյան սկզբում, իր մեջ բազմաթիվ միկրոբ-
ներ ե պարունակում, վորոնք բակլայի կամ
սուրճի հատիկների ձև ունեն: Այս միկրոբ-
ները զետեղված են զույգ-զույգ ու իրենց գո-

գավոր յերեսներով իրար են նայում: Ահա
այս գույզզույդ միկրոբներն են, վոր կոչ-
վում են գոնոկոկ:

Մարդիկ սուսանակով հիվանդանում են
այն ժամանակ, յերբ գոնոկոկներն ընկնեն



1. Սուսանակ. առաջացնող գոնոկոկներ. 2. Թարախոս
բջիջներ (թարախի մասնիկներ):

լորձաթաղանթի և ամենից հաճախ՝ մի-
զանցքի լորձաթաղանթի վրա: Առանց գո-
նոկոկի սուսանակ չի լինում: Մարդիկ
ամենից հաճախ սուսանակով վարակ-
վում են սեռական հարաբերության միջո-

ցով, այսինքն այն ժամանակ, յերբ գոնոկոկ
պարունակող թարախը, հիվանդ կնոջ սեռա-
կան որգաններից, տղամարդու միզանցքն և
անցնում կամ, ընդհակառակը, հիվանդ
տղամարդու միզանցքից – կնոջ սեռական որ-
գանները: Սուսանակը կարող է հիվանդից
առողջին փոխադրվել նաև արտասեռական
ձանապարհով. այդ պատահում ե այն ժամա-
նակ, յերբ գոնոկոկ պարունակող թարախը
փոխադրվի սեռական անդամները մի վորևե
առարկայի միջոցով, որինակ թարախով կեղ-
տոտված սպունգի, ճերմակեղենի և այլնի
միջոցով:

Սրտասեռական սուսանակով վարակվելու
գեպքեր ամենից շատ պատահում են փոքր
աղջիկների մոտ. որինակ, յերբ սուսանակով
հիվանդ մայրերն իրենց հետ միասին մի ան-
կողին են պառկեցնում նրանց. Նույնը պա-
տահում ե նաև միևնույն սպունգը, յերես-
որբիչը և այլն գործածելուց, վորովհետեւ
այդպիսով գոնոկոկները հիվանդից փոխա-
դրվում են առողջ աղջիկների սեռական ան-
դամները: Հիվանդության փոխանցումը
հնարավոր ե նաև այն ժամանակ, յերբ սու-
սանակով հիվանդ կնոջ կամ մարդու ձեռ-
քերը դիպչեն իրենց սեռական անդամներին

և, առանց նախապես ձեռքերը սապոնով լավ լվանալու, նույն ձեռքերով դիպչեն առողջ աղջկա կամ կնոջ սեռական անդամներին։ Այս դեպում ձեռքերին կպած գոնոկոկները փոխանցվում են սեռական որդաններին։ Գոռնոկոկների՝ ձեռքի միջոցով փոխանցումը պատահում ենաւ այն դեպում, յերբ սուսանակով հիվանդը ձեռքերով դիպչում ե իր սեռական որդաններին և ապա նույն ձեռքերն, առանց նրանք նախապես լավ լվանալու, աչքերին ե տանում. այդպիսով մատներին կպած թարախը, վորն իր մեջ գոնոկոկներ ե պարունակում, աչքերի լորձաթաթաղանթին ե անցնում։ Դրա հետևանքով առաջանում ե աչքերի մի շարք ծանր սուսանակային հիվանդություն (բլենորհեա), վորը հաճախ կուրությամբ ե վերջանում։

Աչքերի ծանր սուսանակային հիվանդություն հաճախ են ունենում նորածինները։ Այդ լինում ե այն ժամանակ, յերբ գոնոկոկ պարունակող թարախն ընկնում ե յերեխայի աչքերն այն պահին, յերբ նա անցնում ե սուսանակով հիվանդ իր մոր սեռական ուղիներից։ Վարակման այս տեսակը ներկայումս շատ քիչ ե պատահում և միայն այն դեպ-

քերում, յեթե ծննդաբերության միջոցին համապատասխան կանխաբռուժական միջոցառումը (նորածին յերեխայի աչքերը վարակազերծող դեղեր ներարկել) չի կիրառված։ Իսկ այսպես ե լինում հաճախ այն դեպքերում, յերբ ծննդաբերական ոգնություն հասցնողը վոչ թե մասնագետ բժշկական պերսոնալն ե, այլ տգետ տատմերը։

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Սուսանակն ընթանում ե միատեսակինչպես սեռական, այնպես ել արտասեռական վարակումների դեպում։ Հետևաբար սուսանակի ընթացքը կախում չունի վարակվելու յեղանակից, այլ կախված ե այն բանից, թե հիվանդացած մարդու որդանիզմը վօրչափ արդյոք կարող ե պայքարել իր մեջ մտած գոնոկոկի հետ, և թե վօրչափ ժամանակին ե սկսել հիվանդն իր բժշկությունը, արդյոք կանոնավոր կերպով ե բժժշկվում նա և ձատիվ ե կատարում բժշկի խորհուրդները։

Դրա համար ե, վոր սուսանակը յերբեմն թեթև ե անցնում, յերբեմն ել հենց սկզբից ծանր բնույթ ե ունենում։ Կան դեպքեր,

յերբ սուսանակն ընթանում է առանց բարդությունների, կան և այնպիսի գեղքեր, յերբ նա առաջացնում է այս ու այն՝ հաճախ շատ ծանր՝ բարդությունները։ Յերբեմն սուսանակն անցնում է համեմատաբար կարճ ժամանակում, առանց վորեն հետք թողնելու։ յերբեմն ել տևական ընույթ և զրում կամ, ինչպես ասում են, խրոնիկական ձև և ընդունում։

Սուսանակի ընթացքը Տղամարդկանց
մոտ սուսանակով հի-
վանդացման առաջին նշանները մեծ մա-
սամբ յերկան են գալիս հիվանդ կնոջ հետ
հարաբերություն ունենալու Յ — Դ-ըդ որը
և հազվագյուտ դեպքերում միայն ավելի
յերկար ժամանակ անցնելուց հետո: Նախ և
առաջ հիվանդը թեթև քոր ե զգում միզանց-
քում: Համեմատաբար շուտով այդքորը փոխ-
վում ե այրոցի կամ ծակոցի, վոր զգացվում
ե միզելու ժամանակ: Միզանցքի արտաքին
անցքի յեզրերն այրում, թեթևակի ուռ-
չում և կարմրում են. միզանցքի արտաքին
անցքից սկսում ե արտազատվել նախ
պղառը, իսկ մի յերկու որից՝ դեղնազույն
մի հեղուկ, յերբեմն ել կանաչավուն թա-
րախ:

Ավելի ծանը գեղքերում, վորոնք բարե-
բախտաբար շատ քիչ են, այդ թեթև ուռեցքը
և կարմրությունը չեն սահմանափակվում
միայն միզանցքի արտաքին անցքի շրջանով,
այլ տարածվում են ամբողջ սեռական ան-
դամի վրա: Միզանցքից գուրս ծորող ար-
տազատումները լինում են արյունախառն.
առաջանում ե վարոցի (առնանդամի) սաս-
տիկ, չափազանց ցավոտ լարվածություն
(կանգնում): Մյուս կողմից, լինում են դեպ-
քեր, յերբ առաջին որերում միզանցքից ար-
տազատված պղաոր հեղուկը թարախի չի
փոխվում, այլ մնում ե պղաոր, լրճային-
թարախային: այդ արտազատումների քա-
նակը չի ավելանում, այլ քիչ ժամանակից
արտազատումը նույնիսկ դադարում ե, և
միայն միզանցքը սեղմելիս՝ կարելի յե գուրս
մղել այդ հեղուկի կաթիլը: Նման դեպքե-
րում, միզելիս, այրոցի կամ ծակոցի զգա-
ցումն ել նույնպես կարող ե թույլ արտա-
հայտված լինել կամ նույնիսկ իսպառ չլի-
նել: բայց յեթե բժշկությունը տարվում է
անհանոն կերպով կամ հիվանդն իսպառ չլի-
նել, բայց յեթե բժշկությունը տարվում է
անհանոն կերպով կամ հիվանդն իսպառ չլի-
նել, բայց յեթե բժշկությունը տարվում է



հախառն թարախոտ արտազատումներ. մի-
զելիս՝ ալրոցի և ծակոցի զգացումները կա-
րող են ավելանալ. ցավը ել կարող և զգա-
լապես սաստկանալ:

Սրտազատումների, ինչպես և այրոցի
զգացման անհայտացումը վոչ մի դեպքում
չի կարող առողջացման նշան համարվել, վո-
րովինեւս գոնոկոկները կարող են դեռ մնա-
ցած լինել միզանցքում, հետեւբար և նը-
մանորինակ հիվանդը՝ յուրաքանչյուր ան-
դամ հարաբերություն ունենալիս՝ կվարակի
կնոջը. բացի դրանից, ինքն ել կարդ և հի-
վանդանալ այն բոլոր ծանր բարդություն-
ներով, վորոնք առաջանում են սուսանակից:
Իսկ այսպիսի բարդությունները ձգձգում
են հիվանդության ընթացքը, առաջացնում
են խրոնիկական սուսանակ, և այնուհետև
այսպիսի հիվանդը մշտական տարածողն և
հանդիսանում այս հիվանդության, վարակե-
լով այն կանանց, վորոնց հետ նա սեռական
հարաբերություն ե ունենում:

Սուսանակով հիվանդների մոտ բարդու-
թյուններ առաջ են գալիս հատկապես այն
ժամանակ, յերբ հիվանդը կամ իսպառ չի
բժշկվում, կամ բժշկվում ե անկանոն կերպով
և կամ չի կատարում բժշկի մատնանշած

անհրաժեշտ կանոններն, այսինքն՝ խմում ե-
վոգելից խմիչքներ, սեռական հարաբերու-
թյուններ և ունենում, շեշտակի շարժումներ
և անում և այլն. իսկ այս ամենը նպաս-
տում է բորբոքման հետագա ծավալմանը,
գոնոկոկների սեռական գեղձերի կամ արյան
մեջ թափանցմանը և նրանց հետագա ծա-
վալմանը:

Սրա հետևանքն այն է լինում, վոր մի-
զապարկի վիզը բորբոքվում ե, հիվանդը կա-
րեք և զգում հաճախակի միզելու, վոր կա-
տարվում ե սաստիկ ցափով, ու միզելու
վերջին ել յերբեմն արյուն է յերեան գալիս:
Յերբ գոնոկոկները հասնեն այսպես կոչված
առաջնազեղձին (պրոստատ), վոր ըստ ձեր
և մեծության նման է փոքր շագանակի և
տղամարդկանց մոտ միզանցքի սկզբում և
գտնվում, ապա նրա բորբոքումն և առաջա-
գում: Այդ դեպքում, սուր ցավերի ու բարձր
ջերմաստիճանի հետ միաժամանակ, կարող
ե միզաթափության դժվարություն առաջա-
նալ, իսկ յերբեմն նաև կատարյալ միզարգե-
լություն:

Յերբ բորբոքումն անցնում է ամորձիք-
ներին, առաջ և գալիս մակամորձիքի բոր-
բոքում, վորը զուգորդվում է ցավերով, յեր-

մաստիճանը բարձրանում ե, ամորձիքը մեծանում, փոշտի մաշկը կարմրում: Յեթե բորբոքման պրոցեսն անցնի յերկու մակամորձիներին, այն ժամանակ յերկու կողմի սերմանածորանի վարակման հետևանքով, վորհաճիս և պատահում, վերջինը կարող է անանցանելի դառնալ այրական սերմի համար. դրա հետևանքով՝ սեռական հարաբերություն ունենալիս, բեղմնավորումն անկարելի յելինում, մարդը դառնում է անպատճեն չի կարողանում յերեխաներ ունենալ: Յերբ գոնոկիներն ընկնում են արյան մեջ, ապա նրանք արյան հոսանքով կարող են արյունատար անոթների միջով փոխադրվել մարմինի այն մասերը, վորոնք նախնական վարակման տեղից հեռու յեն ու այստեղ բորբոքման պրոցես առաջ բերել:

Այսպես և առաջ զալիս, որինսակ հոգերի սուսանակային բորբոքումը, վորին զուգորդում են բարձր ջերմաստիճան, թեթե ուռեցը և հարվածված հոգի սաստիկ ցավեր. դրանց հետևանքով հիվանդն ստիպված է լինում ամիսներով անկողմնում մնալ: Հոգի այսպիսի սուսանակային բորբոքման հետեւ վանքով, յերբեմն նույն հոգի կատարյալ անշարժություն և առաջանում:

Բարդությունների դեպքում, կամ յեթե սուսանակով բռնված հիվանդը չի բժշկվում, կամ վատ և բժշկվում, բժշկությունը ձգձգվում է, և սուսանակն ինչպես ասացինք, խրոնիկական է դառնում: Այս դեպքում կարող է զարգանալ միզանցքի անձկություն, ինչպես նաև սեռական թուլություն:

Սուսանակի ընթացքը կանանց մոտ ավելի ծանր ընթացք է ունենում, քան տղամարդկանց մոտ: Կանանց սուսանակի բարդություններն ավելի բազմաթիվ են և ել ավելի լուրջ, քան տղամարդկանցը, չնայած վոր կանայք, հիվանդության սկզբում, վոչ միայն կարողանում են ավելի հեշտությամբ տանել սուսանակը, քան տղամարդիկ, այլև հիվանդությունն այնքան աննկատելի յել լինում, վոր սուսանակով հիվանդ կինը նույնիսկ չի յել կատակածում, թե ինքը հիվանդ է:

Կանանց մոտ սուսանակը մեծ մասամբ սկսվում է սուր կերպով, ինչպես և տղամարդկանց մոտ: Այդ դեպքերում, հիվանդության առաջին որերին, հիվանդ կինն սկսում է զգալ խտութանք, քոր կամ այրոց իր արտաքին սեռական որգաններում, իսկ քայլելիս — նաև ցավեր: Միքանի որից յերևան

Ե գալիս ուտիչ, թարախախառն ապարահ և յերեմն ել թարախի արտազատում միզանցքից: Վերջին դեպքերում միզաթափությունը հաճախանում ե և ցավոտ ե լինում: Կոսի արտաքին սեռական որգանները թեթևակի ուռչում են, մեծ ու փոքր սեռական շըրթների, ինչպես և հեղտոցի լորձաթաղանթները կարմրում են:

Յեթե հիվանդը չի բժշկվում, կամ անկարգ ե բժշկվում, բորբոքումը շատ հեշտությամբ կարող ե անցնել արգանդին, ձվարաններին ու նրանց շրջապատող բջիջներին և վորովայնամաշկին: Այս դեպքերում ջերմաստիճանը շեշտակի բարձրանում ե, փորի տակում սոսկալի ցավեր են առաջանում. սուսանակը սովորաբար դառնում ե մի զըժվար բժշկելի հիվանդություն, ընդունում ե տևական խրոնիկական ձե, վոր մի շարք ծանր հետևանքներ ե ունենում:

Մշտական ցավերը, մերթ լորձա-թարախային, մերթ զուտ թարախային, յերբեմն ել ուտիչ և վատ հոտ ունեցող արտազատումներն, ամսականների խանգարումը, ցավոտ զուգավորումը, չբերքությունը, ներվային սիստեմի գործունեյության խանգարումը, աշխատունակության շեշտակի անկումը —

ահա կանանց սուսանակի այն հետևանքները, վորոնք յերկար տարիներով աշխատանքի համար անպետք կամ սակավ պիտանի հաշմանդամ են դարձնում նրան:

Բացի զբանից, կանանց մոտ պատահում են այնպիսի բարդություններ, վորոնք սուսանակի ժամանակ լինում են նաև տղամարդկանց մոտ (միզանցքի, յերիկամասկահի բորբոքում, հողերի, սրտի և այլն հիվանդացումներ):

Սուսանակի ընթացքը յերեխաների մոտ: Աղջիկների մոտ սուսանակն սկսվում է այնպես, ինչպես և կանանց մոտ, այսինքն՝ սեռական որգաններից թարախային արտազատում ե դալիս, արտաքին սեռական մասերը կարմրում և ուռչում են: Յերեխաների մոտ սուսանակը շատ քիչ անգամ ե տարածվում դեպի վերև, ավելի խորը նստած սեռական որգանները: Բայց ինչպես վերեվում ասացինք, աղջիկների մոտ ել գոնոկոկը կարող ե յերկար ժամանակ պահպանվել, այնպես վոր՝ մանկության հասակում սուսանակով հիվանդացած աղջիկը, յեթե բժշկված չի յեղել, ամուսնությունից հետո կարող ե սուսանակով վարակել իր ամուսնուն:

ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆՎԵԼ ՍՈՒՍԱՆԱԿԻՑ

Այժմ մեղ համար պետք ե պարզ լինի,
վոր սուսանակը թեթև հիվանդություն չե,
ինչպես վոր կարծում են անտեղյակ մազ-
դիկ ընդհակառակը, դա մի լուրջ հիվան-
դություն ե, բազմատեսակ հետևանքներ
ունենում ե հիվանդի համար: Հետևաբար
սուսանակի դեմ պայքարը լուրջ և կարեռ
գործ ե, վորի վրա պետությունն ահագին
միջոցներ և ծախսում: Այդ պայքարը տար-
վում ե վեներաբանական հատուկ դիսպան-
սյորների, պոլիկլինիկների, ամբուլատորիա-
ների և այլնի մի ամբողջ ցանցի միջոցով:

Ավելի հեշտ ե կանխել սուսանակային
հիվանդացումը, քան նրան բժշկելը:

Հիվանդացումից զերծ մնալու լավագույն
միջոցն ե՝ սեռական հարաբերություն չու-
նենալ այն կանանց հետ, վորոնց լավ չգի-
տես կամ բոլորովին չզիտես, այսինքն՝
հեռու լինել պատահական սեռական հա-
րաբերություններ ունենալուց: Ինչ վե-
րաբերում ե ամուսնացողներին, նրանք՝
ամուսնական կազ հաստատելիս պետք ե
լավատեղյակ լինեն իրար առողջության
մասին:

Իսկ յեթե տղամարդը, համենայն դեպք
սեռական հարաբերություններ ունի առող-
ջության տեսակետից կասկածելի կնոջ հետ,
ապա նա պետք ե վարակումը կանխող մի-
ջոցներ ձեռք առնի: Այս գործում կարող ե
իր ծառայությունը ցուց տալ կոնդոմը,
վոր առնանդամի վրա հազցնվող սետիննե-
շապիկ ե, կասկածելի կնոջ հետ սեռական
հարաբերություն ունենալուց հետո հանձ-
նարաբվում ե միզել, վորովհետև մեզի հո-
սանքը՝ միզանցքից դուրս ցայտելիս՝ կարող
ե սրբել-տանել այն թարախային արտազա-
տումները, վորոնք միզանցքն եյին ընկել
սեռական հարաբերության ժամանակ և
վորոնց մեջ գոնոկոնիներ են պարունակ-
վում:

Սակայն ամենից լավն ե զիմել հատուկ
մասնագիտական բժշկական հիմնարկ՝ վեն-
դիսպանայոր կամ այսպես կոչված շուտա-
փույթ ոգնության ախտականխական (պրո-
ֆիլակտիկ) կայանը, ուր հատուկ բուժպեր-
սոնալը՝ նախազգուշական միջոցառումներ
կգործադրի: Վորապեսզի այս միջոցառումներն
ավելի իրական լինեն, այդ հիմնարկներին
պետք ե զիմել սեռական գործողությունից
հետո, վորքան կարելի յե շուտ: Կնոջ համար

ավելի դժվար ե պահպանվելը. բայց և այն-
պես, հիվանդանալուց պահպանվելու տեսա-
կետից, նրա համար ել կարող ե ոգտավիետ
լինել սեռական գործողությունից հետո մի-
զանթափումը, հեշտոցի լվազումն ու որրս-
կումը: Կնոջ համար ել շատ ավելի իրական
կինի սուսանակով հիվանդանալու դեմ գոր-
ծադրվող նախազգուշական միջոցաւումներ՝
յեթե նա դիմի պրոֆիլակտիկ կայանը:

ՍՈՒՍԱՆԱԿԻ ԲՈՒԺՈՒՄԸ

Ինչ ել լինի, ամեն մարդ՝ սուսանակով
հիվանդանալու դեպքում՝ պետք ե անպատ-
ճառ բժշկի: Պետք ե սկսել բժշկվել վորքան
կարելի յե շուտ, այսինքն հենց վոր լերեան
դան սուսանակի այն նշանները, վորոնց
մասին վերեւում արդեն խոսել ենք: Չպետք
ե սպասել վոր բորբոքման պրոցեսն ավելի
ևս սաստկանա, և հանգստացնել իրեն, վոր
այց գուցե սուսանակ չե: Ըստ մեծի մասին
դա սուսանակ ե լինում: Ճշտիվ վորոշել՝ սու-
սանակ ե այդ, թե վոչ, կարող ե միայն
բժիշկը, ընդունում նա ավելի հեշտությամբ
կկարողանա վորոշել այն, յերբ նա նոր ե
սկսված: Բժշկին շուտ դիմելու դեպքում

վոչ միայն հիվանդությունը ճշտիվ կճա-
նաչվի, այլև բժշկությունը կսկսվի անմիջա-
պես, այսինքն՝ յերբ նա նոր ե սկսվել դեռ
չի հնացել և հեշտ ե նրան բուժելը:

Յեթե բժշկությունը տարվում ե վոչ թե
բժշկի, այլ զանազան հաքիմների, տատմեր-
ների և ուրիշ շարլատանների ձեռքով, ապա
հիվանդությունը բարդություններ ե ունե-
նում և խրոնիկական ձեի յե փոխվում:
Նույն հետեւանքները կարող են լինել նաև այն
դեպքում, յերբ հիվանդը, թեև բժշկի մոտ ե
բժշկվում, սակայն չի կատարում նրա այն
խորհուրդները, վորոնք վերաբերում են հա-
մապատասխան հիգիենական միջոցաւում-
ների պահպանմանն, այսինքն խմում ե, սե-
ռական հարաբերություններ ե ունենում,
խիստ շարժումներից չի զգուշանում և
այլն:

Ուստի, սուսանակը բուժելու համար,
անհրաժեշտ ե իսկույն՝ հիվանդությունը
յերեալուն պես՝ բժշկի դիմել և միանգա-
մայն ճշտությամբ կատարել նրա հրահանգ-
ները: Դրանցից զլիսավորներն են՝ մինչեւ
բուժող բժիշկը թույլ չտա, սեռական հա-
րաբերություն չունենալ, վոգելից խմիչք-
ներ (ողի, գինի, գարեջուր) չգործածել,

կծու և բարկ ուտելեղին (ծովաբողկի*, քաշախ, մանանեխ և այլն) չգործածել, ձիով և հեծանիվով ման գալուց խուսափել և այլն:

Նախազգուշական այս հիմական միջոցառութիւնները չկատարելու հետևանքով, տեղական պրոցեսը վատանում է, հիվանդությունը ավելի յե ծավալվում և առաջցնում է մի շարք բարդություններ, վորոնք ձգձգում են հիվանդության ընթացքը և նպաստում են նրա խրոնիկական ձև ընդունելուն:

Ինքնին հասկանալի յե վոր՝ սուսանակը գեռ չանցած՝ սեռական հարաբերություն ունենալը վոչ միայն ահազին վիստ և հասցնում իրեն հիվանդին, այլև այդ դեպքերում հիվանդը, վորպես կանոն վարակում է ուրիշին և քրեական պատժապարտ վոճիր և գործում (Քրեական Որենսգրքի 150-րդ հոդվածը):

Ինչ վերաբերում է սուսանակով հիվանդի բուժմանն, ապա բուժման յեղանակի ընտրությունը հիվանդին դարմանող բժշկի գործն է. նա յուրաքանչյուր դեպքում հաշվի:

յե առնում պրոցեսի աստիճանը, բարգությունների առկայությունը կամ բացակայությունը, հիվանդի ընդհանուր կացությունը և այլն:

Բժշկի մոտ կանոնավորապես բժշկվելու դեպքում բարգությունների քանակին զգալապես պակաս և լինում, հետեաբար պակաս են նաև այն դեպքերը, յերբ սուսանակը խրոնիկական ձև և ընդունում, վորպիսին բժշկելն ավելի դժվար է:

ԲՈՒԺԵԼԻ ՅԵ ԱՐԴՅՈՒ ՍՈՒՍԱՆԱԿԸ

Սուսանակը բուժելի հիվանդություն եւ բայց նա բուժված և համարվում վոչ թե այն ժամանակ, յերբ դադարել են միզանցքի արտազատութիւնները կամ յերբ դադարել են կնոջ և աղջկա ապարահները, կամ յերբ մեզը՝ պըղտոր լինելու փոխարեն՝ թափանցիկ և դառնում, այլ միայն այն ժամանակ, յերբ որդասիդմի մեջ գոնոկոկիներ չկան այլես, իսկ սա կարող և վորոշել միայն բժիշկը: Վորովինեաւ արտազատութիւնները կարող են դադարել ու մեզը թափանցիկ դառնալ, բայց հյուսվածքներում դեռ կարող և մնացած լինել գոնոկոկը, բժշկությունը դադարեցնե-

*) Խրեն: Ման. բարգմ.

զուց հետո շատ շուտով սուսանակը կարող է սուր կերպարանք ստանալ. նորից յերեան են զալիս գոնոկոկ պարունակող արտազատումները, և կարող են ծագել այն բոլոր բարդությունները, վորոնք առաջանում են սուսանակից:

Ինքնին հասկանալի յե, վոր մինչև հիվանդի գոնոկոկները չվերջանան, նա սեռական հարաբերություն ունենալիս՝ պետք է վարակի ուրիշին: Ապաքինված կարող է համարվել այն հիվանդը, վորի վրա բազմիցս կատարված բազմակողմանի հատուկ հետաղոտումը ցույց է տալիս, վոր նա գոնոկոկներ չունի այլևս: Հետևաբար, վորոշել այն հարցը՝ հիվանդի սուսանակն անցել ե, թե՛ վոչ, պե՞տք ե արդյոք շարունակել բուժումը, թե վոչ, կարող է արդյոք հիվանդացածը՝ սեռական հարաբերություն ունենալիս՝ ուրիշին ել վարակել սուսանակով, թե վոչ, — այս բոլոր հարցերը կարող ե վորոշել միայն բժիշկը: Հետևաբար մինչև բժշկող բժիշկը չհաստատի, թե սուսանակն արդեն բուժված ե, վոչ մի հիվանդ՝ մարդ թե կին՝ չպետք ե դադարեցնեն բժշկությունը, չպետք ե սեռական հարաբերություններ ունենան և ամուսնանան:

ՀՈՒՇԱԳԻՐ ՍՈՒՍԱՆԱԿՈՎ ՀԻՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ

1. Բժշկվիր միայն բժշկի մոտ: Ընկերներիդ կամ ընկերուհիներիդ խորհուրդներին ականջ մի դնիր: Տատմերներին ու հաքիմներին մի դիմիր:

2. Վորքան շուտ դիմես բժշկի և լիովին ու ճշությամբ կատարես նրա խորհուրդներն, այնքան շուտ կբժշկվես:

3. Զի կարելի խմել վոգելից խմիչքներ (ողի, գարեջուր, գինի). Ճի կարելի ուտել շատ աղի, թթու և կծու կերակրեղեն: Հիվանդության սուր շրջանում հանձնաբարգում ե գործածել ավելի շատ հեղուկներ (թեյ, ջուր, կաթ):

4. Մինչև բժիշկը թույլ չտա, սեռական հարաբերությունը ունենալն արգելվում է, վորովհետեւ կվարակես վոչ միայն առողջ մարդուն և պատասխանատու կլինես որենքի առաջ (Քրեյական Որենսգրքի 150-րդ հոդված), այլև բժշկությունդ յերկար ժամանակով կյերկարացնես:

5. Թարախոտ արտազատումներովդ, առանց սեռական հարաբերություն ունենալու յել, կարող ես վարակել ուրիշներին,

մանավանդ յերեխաներին։ Հետևաբար քնիր
մենակ, արտաքնոցի նստատեղին մի կեղ-
տոտիր, լվացք անելիս՝ ճերմակեղենդ յեռաց-
րու, այրիր այն լաթերն ու բամբակը, վո-
րոնցով թարախն ես սրբել։

6. Չեռքեթդ լավ լվա սապոնով, մանա-
վանդ յուրաքանչյուր սրսկումից ու միղե-
լուց հետո, թե չե կարող ես վարակն աշ-
քերիդ տանել և կուրանար։

7. Ինքնաբերաբար մի դադարեցրու
բժշկությունդ։ Միայն բժիշկը կարող է վո-
րոշել՝ առողջացել ես, թե ի՞ոչ։

Отв. Ред. Г. А. Потенц Пом. тех. ред. Д. М. Джиниблаян

Издание 249/4500. Объем 1 печ. листа. Статформат А6—105x148
Уполномоченный Управления Заказ 2649 Сдано в набор
31.VI.1935 Библиотека сдана в печать 31.VI.1935 г.

Типография им. Стаски 1935 года г. Ростов на Дону



ՀԽ. Ա. ՄԱՅՆԻԿԱՆ
Ս. ՄԱՅՆԻԿԱՆ

«Ազգային գրադարան»



NL0273905

ԳԻՐ
Цена 15 ԿՊ. ԿՈ.Պ.

4571

7453

На армянском языке

Доктор И. А. ОЛЬШАНСКИЙ

ГОНОРРЕЯ (ТРИППЕР)
И БОРЬБА С НЕЮ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

Ростов н-Д., Буденновский пр., № 30

Գ Ր Ա Պ Ա Հ Ե Ս Բ

Առատով-Դոմ, Մուկովսկայա, № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԱՐՈՑՈՒՅՐ)